# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2
## ԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/6 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան** **08 օգոստոսի 2023թ.**

2023թ.-ի հուլիսի 18-ից օգոստոսի 08-ը ք. Երևան Օրբելի եղբայրների 22 հասցեում գտնվող ՀՀ գիտության կոմիտե շենքում տեղի ունեցավ գիտական սարքերի և սարքավորումների ձեռքբերման ԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/6 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Ա. Մովսիսյան՝ | ՀՀ գիտության կոմիտեի նախագահի տեղակալ, |
| Պ. Վարդանյան՝ | «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ, |
| Գ. Գրիգորյան՝ | «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ա. Մովսիսյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Է. Ավագյանը՝ «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

### 1. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Գնման հայտով սահմանված՝ ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների, աճուրդի առաջարկված մեկնարկային գների և այլ անհրաժեշտ տեղեկությունների մասին:
3. Ընթացակարգին ներկայացված հայտերը գնահատելու մասին:
4. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների, ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:
5. Ընթացակարգը չկայացած հայտարարելու որոշման մասին:
6. Համակարգի միջոցով գեներացված հայտարարություն/ներ/ի և անգործության ժամանակահատված կիրառելու կամ չկիրառելու մասին:

7\. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 2. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ, ԱՃՈՒՐԴԻ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2023թ.-ի հուլիսի 18-ին, Ք. Երևան Օրբելի եղբայրների 22 հասցեում գտնվող ՀՀ գիտության կոմիտեի շենքում ժամը 10:30-ին նախագահը նիստը հայտարարեց բացված և հայտարարեց գնման առարկաների վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը.

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Աճուրդի մեկնարկային գին (ՀՀ դրամ) | Մեկնարկ | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|---|---|
| 1 | Ֆլուորեսցենտային սպեկտրոմետր | 17720714.34 | 2023-07-19 10:30:00 | **22,984,800** |

ԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/6 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի ներկայացումն ու բացումը, ինչպես նաև՝ հակադարձ աճուրդի անցկացումը նախատեսված էր https://eauction.armeps.am/ կայքի միջոցով՝ հրավերով և համակարգով սահմանված օրը և ժամին:

Հանձնաժողովը որոշեց.

1\. Ներկայացած տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/6 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ անձինք /այսուհետ՝ նաև մասնակիցները/.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Հասցե; հեռ. | Էլ. փոստ | ՀՎՀՀ |
|---|---|---|---|---|
| 1 | ETW-Tekhnologiya B.V. | Նիդեռլանդներ, Ռոուբուլան, 36,252 Վորսխոտեր, +31 713 411 839 | orders@etwek.nl | 69369917 |
| 2 | Կոնցեռն-Էներգոմաշ ՓԲԸ | ՀՀ, ք. Երևան, Ազատության 26/8, +374 11878717 | lawyer@c-e.am | 01210095 |

2023 թվականի հուլիսի 19-ին Հանձնաժողովն արձանագրեց, որ՝ համակարգի միջոցով գնահատման մեջ ներառված.

1\. Հայտերը կազմվել և ներկայացվել են ԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-23/6 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ՝ ընթացակարգ/ հրավերի /այսուհետ՝ հրավեր/ պահանջներին համապատասխան.

3. Ներկայացված հայտերում ներառված փաստաթղթերը համապատասխանում են իրավերով սահմանված վավերապայմաններին, բացառությամբ.

**ETW-Tekhnologiya B.V-ի** կողմից չեն պահպանվել հրավերով սահմանված պայմանները, մասնավորապես բացակայում է հայտում ներառված փաստաթղթերի և տեղեկատվությունների հայերեն տարբերակները: Հայտի (ներառում է մասնակցի առաջարկն ընդգրկող բոլոր փաստաթղթերը), հայերեն լեզվով ներկայացումը պարտադիր է, իսկ անգլերեն կամ ռուսերեն լեզվով հայտի ներկայացումը մասնակիցն ապահովում է ըստ ցանկության: Միաժամանակ առկա են անհամապատասխանություններ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում, մասնավորապես պահանջվել էր.

- Յուրաքանչյուր մոնոխրոմատորը պետք է ունենա ֆիքսված, ընտրելի 1.5, 2.5, 5, 10 և 20 նմ սպեկտրային թողունակություն, գումարած 10 նմ կլորացում, և ստանդարտ համակարգչի կողմից կառավարվող թափառող/թափառող զտիչներ, սակայն Ձեր կողմից ներկայացվել է, որ Perkin Elmer FL6500 սարքը ունի 1.0, և չունի 1.5 2.5, 5, 10 և 20 նմ; և չունի գումարած 10 նմ կլորացում,

- Գրգռումը Արդյունքը ներառում է բացման և կափարիչի կարգավորումներ, 1 տիրույթի ֆիլտր (250-395), 4 կտրված ֆիլտր (295 նմ, 360 նմ, 430 նմ և 550 նմ) և 3% թուլացնող, սակայն Perkin Elmer FL6500 սարքը չունի 4 կտրված ֆիլտր (295 նմ, 360 նմ, 430 նմ և 550 նմ),

- Ճառագայթում1 տիրույթի ֆիլտր (250-395), 4 կտրված ֆիլտր (295 նմ, 360 նմ, 430 նմ և 550 նմ) և 3% թուլացնող, սակայն Perkin Elmer FL6500 սարքը չունի 4 կտրված ֆիլտր (295 նմ, 360 նմ, 430 նմ և 550 նմ),

- Լույսի աղբյուրը պետք է ունենա սենյակային լույսի հանդեպ կայունություն, սակայն Perkin Elmer FL6500 սարքը չունի սենյակային լույսի հանդեպ կայունություն:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 4. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԱՅԴՊԻՍԻՆ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2023 թվականի հուլիսի 19-ին, Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները.

Ներկայացված գնային առաջարկների և մասնակիցների՝ ընտրված լինելու վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում (այսուհետ՝ Աղյուսակ):

ՀՀ դրամ

| Չ/հ | Ներկայացված հայտեր | Նախահաշվային գին | Նախնական առաջարկ | | | Վերջին առաջարկ | | | Կարգավիճակ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Արժեք | ԱԱՀ | Ընտրված մասնակից «X» | Արժեք | ԱԱՀ | Գին | Ընտրված մասնակից «X» |
| 1 | ETW-Tekhnologiya B.V. | 22,984,800 | 45886 USD | 0% | 45886 USD | 17720714.34 AMD | 0% | 17720714.34 AMD | X |
| | Կոնցեռն-Էներգոմաշ ՓԲԸ | | 19154000 AMD | 20% | 22984800 AMD | 19154000 AMD | 20% | 22984800.00 AMD | |

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:

2. Նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և համակարգի միջոցով ծանուցելով առաջարկել շտկման ենթակա անհամապատասխանություններ արձանագրված մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

28.07.2023թ-ին Հանձնաժողովը արձանագրեց, որ.

ETW-Tekhnologiya B.V.-ի կողմից սահմանված ժամկետներում եւ կարգով՝ համակարգի միջոցով ներկայացվել է նոր տեխնիկական բնութագիր, որտեղ մասամբ են շտկված արձանագրված անհամապատասխանությունները, մասնավորապես ներկայացվող ապրանքի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում ընթացակարգի հրավերով սահմանված չափանիշներին հետևյալ ցուցանիշներով՝

- Լամպը պետք է միացված լինի միայն նմուշի չափման ժամանակ՝ էապես վերացնելով ֆոտոսպիտակեցնող ազդեցությունները: Իմպուլսային լամպը վերացնում է օզոնի արտազատումը լաբորատորիա, իսկ ամբողջովին փակ լամպի մոդուլը ապահովում է բարձր արդյունավետություն և անվտանգություն լամպի փոխարինման ժամանակ: Նեղ 2 միկրովայրկյան լամպի իմպուլսը (fwhm) ապահովում է առավելագույն հզորություն, որը համարժեք է 75 կՎտ-ին՝ ուժեղացված զգայունության համար:
- Ներկայացված **Perkin-ի FL6500 չունի 1.5 նմ ճեղքը,** ինչպես նաև **Perkin-ի FL6500 չունի 10 նմ կլորացում,** / ինչը ներկայացված է իրենց պաշտոնական տեխնիկական բնութագրում/ իսկ դրանք կարևոր են մեր գիտական աշխատանքների չափումների համար
- Ներկայացված շտկման մեջ պոտենցիալ մատակարարը **հաստատում է, որ չունի 4 ֆիլտր, սակայն դրանք կարևոր են, չնայած մատակարարը, առանց հիմնավորման, փորձում է համոզել, որ դրանք կարևոր չեն:** Նշենք, որ գիտական անհրաժեշտությունից ելնելով մեզ հարկավոր է հենց չորս ֆիլտր նշված տիրույթներում, նմուշների յուրահատկությունից ելնելով, ինչն էլ հստակ ներկայացված է մրցույթի տեխնիկական բնութագրում:
- Հաշվի առնելով բազմատեսակ նմուշների առկայությունը՝ 3% թուլացումը անհրաժեշտ է սարքի դետեկտորի պահպանման համար: Մատակարարը ընդունում է, որ Perkin-ը չունի 3% թուլացում, որի փոխարեն առաջարկում է 1%՝ չկարևորելով այն, ինչը սակայն էական տարբերություն է:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

07.08.2023թ.-ին Հանձնաժողովը որոշեց.

1. ETW-Tekhnologiya B.V.-ի կողմից ներկայացված հայտը 1-ին չափաբաժնի մասով գնահատել անբավարար և մերժել, հիմք ընդունելով Ընթացակարգի հրավերի 8.11 կետով սահմանված պահանջները:

2. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջների համաձայն նախաձեռնել գործընթաց՝ ETW-Tekhnologiya B.V.-ի -ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

3. Կարգի 67-րդ կետի հիման վրա ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցով մասնակցի՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին բավարարելու մասին հայտով ներկայացված հավաստման իսկությունը չստուգել՝ պատճառաբանված որոշման բացակայության պատճառով:

4. Համակարգի կողմից գնահատման մեջ ներառված հայտերի գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:

5. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Չ/Հ | Գնահատման մեջ ներառված մասնակցի անվանումը* | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 1-ին | ETW-Tekhnologiya B.V.՝ | անբավարար |

*Գնահատվում են միայն մասնակիցների կողմից ներկայացված այն հայտերը, որոնք համակարգի կողմից ներառվել են գնահատման ենթակա հայտերի մեջ:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 5. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ համակարգի կողմից գնահտման մեջ ներառված ETW-Tekhnologiya B.V.-ի կողմից ներկայացված հայտը գնահատվել է անբավարար և մերժվել Հանձնաժողովը որոշեց.

1. Ընթացակարգը հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջները:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 6. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԳԵՆԵՐԱՑՎԱԾ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ/ՆԵՐ/Ի և ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԿԱՄ ՉԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Է. Ավագյանը ներկայացրեց գնահատող հանձնաժողովի կողմից իրականացված գնահատումների արդյունքում՝ համակարգի կողմից տրամադրված հայտարարությունների տեքստերը:

Հանձնաժողովը որոշեց.

2. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել համակարգի միջոցով գեներացվող հայտարարություն/ներ/ը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

3. Հաստատել համակարգի կողմից տրամադրված հայտարարության տեքստերը:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 7. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ տեղի չեն ունեցել:

2. Գնման վերաբերյալ հարցումներ, պարզաբանումներ չեն եղել և հիմնավորումներ չեն պահանջվել:

3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Ա. Մովսիսյան ____________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Պ. Վարդանյան ____________

Գ. Գրիգորյան ____________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Է. Ավագյան ____________

PROMOTION